ԱՐՄՍՏԱՏ (ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ)

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ

ԹԻՎ 1

ԵՐԵՎԱՆ – 2024

Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2024թ. հունվարին*

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնանկումը (2024թ. հունվարը 2023թ. հունվարի նկատմամբ) կազմել է 0.9%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ գրանցվել է 1.2% գնաճ:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ	2024թ.		
	հունվարը		հունվարը 2015թ. ** նկատմամբ
	2023թ. հունվարի նկատմամբ, %	2023թ. դեկտեմբերի նկատմամբ, %	
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը	-0.9	1.2	126.3
այդ թվում՝			
01 սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	-5.8	2.2	132.8
02 ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	7.4	0.3	162.5
03 հագուստ և կոշիկ	1.9	-0.4	131.5
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.8	0.6	111.6
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.5	-0.3	117.8
06 առողջապահություն	1.7	0.2	122.5
07 տրանսպորտ	9.2	1.5	134.5
08 կապ	-0.5	0.0	99.1
09 հանգիստ և մշակույթ	1.3	1.0	132.7
10 կրթություն	4.8	0.0	127.4
11 ռեստորաններ և հյուրանոցներ	3.7	0.4	131.3
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.0	0.3	123.7

Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.8-1.9%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել են Վանաձոր և Գավառ քաղաքներում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.1%-ով:

Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2024թ. հունվարին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)



* Սպառողական գների ինդեքսի ավելի ընդարձակ տեղեկությունը զետեղվում է <<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում>> ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305): ՍԳԻ-ի զամբյուղի կազմի ու կառուցվածքի և դրանց տեսակարար կշիռների արդիականացման վերաբերյալ տեղեկությունը բերված է հավելված 3-ում:

** Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հղման ժամանակաշրջան

Ենթաինդեքսների տոկոսային փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2024թ. հունվարին (նախորդ ամսվա նկատմամբ)



Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

%

	2024թ. հունվարը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ
Սպառման ապրանքներ	-2.9	1.3
այդ թվում՝		
սննդամթերք, խմիչք և ծխախոտ	-4.5	2.0
ոչ պարենային ապրանքներ	0.6	-0.3
Ծառայություններ	3.4	1.0

Սպառողական գների հավելաճը 2015-2024թթ. հունվարին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



Սպառողական գների ինդեքսի տոկոսային փոփոխությունները նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, 2020-2024թթ.



Սննդամթերքի գներ: 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 5.8% գնանկում, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.2% գնաճ:

Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 1.2-4.0%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գների մակարդակն աճել է 2.0%-ով:

Պարենային հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2024թ. հունվարին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2024թ. հունվարը		2024թ. հունվարը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	-8.8	-0.2	-0.734	-0.019
Միս	-1.1	0.4	-0.115	0.044
Ձուկ և ծովամթերք	-6.5	-1.4	-0.048	-0.011
Կաթնամթերք, պանիր և ձու	-2.1	0.7	-0.122	0.040
Յուղեր և ճարպեր	-21.0	-1.2	-0.601	-0.034
Միրգ	-0.8	5.8	-0.074	0.202
Բանջարեղեն	-11.6	12.4	-0.650	0.685
Շաքար, մրգախյուս, մեղր, օշարակներ, շոկոլադ և շաքարային հրուշակեղեն	-4.1	-0.4	-0.08	-0.007
Սննդամթերք, չներառված ուրիշ խմբավորումներում	-5.7	-0.6	-0.013	-0.002
Սուրճ, թեյ և կակաո	0.3	0.0	0.002	0.000
Հանքային կամ աղբյուրի ջուր. շշալցված խմելու ջուր	2.6	0.0	0.012	0.000
Օղի	8.7	0.8	0.136	0.011
Գինի	1.5	-0.6	0.011	-0.002
Գարեջուր	3.4	0.8	0.008	0.002
Ծխախոտային արտադրատեսակներ	8.8	0.1	0.180	0.002

Խոզի մսի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ նվազել է 9.8%-ով, գառան մսինը՝ 1.7%-ով, պանրինը՝ 7.2%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է համապատասխանաբար 1.2%, 0.7%, 0.5% գնաճ: Տավարի մսի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ աճել է 0.3%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.0%-ով:

2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ թթվասերի գինն աճել է 0.8%-ով, թարմ կաթինը՝ 3.4%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.1% և 1.1%-ով:

Ձվի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ աճել է 1.1%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.0%-ով:

2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 5.8% գնանկում, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.5% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի գները 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ աճել են 6.4%-ով, ծխախոտային արտադրատեսակներինը՝ 8.8%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.5% և 0.1%-ով:

Դրան զուգընթաց, ալյուրի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ նվազել է 19.7%-ով, մակարոնեղենինը՝ 11.9%-ով, հացինը՝ 7.3%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.4%, 0.7% և 0.1%-ով:

Մարգարինի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ նվազել է 24.6%-ով, «Իշխան» ձկնատեսակինը՝ 7.4%-ով, կարագինը՝ 6.7%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.6%, 1.6% և 1.5%-ով:

2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հնդկացորենի՝ 23.5%, ոլոռի՝ 17.3%, ոսպի՝ 15.6%, հաճարի՝ 8.6%, ձավարի՝ 6.9%, բլղուրի՝ 6.5%, բրնձի՝ 3.2%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 0.9%, 0.7%, 0.6%, 1.6%, 1.7%, 0.1%, 0.8% գնանկում:

Թռչնամսի գինը 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ աճել է 0.2%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 0.6% գնանկում:

2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ արևածաղկի բուսական յուղի գինը նվազել է 31.0%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.2%-ով:

Շոկոլադի և հրուշակեղենի գները 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ նվազել են 5.9% և 0.4%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.9% և 0.5%-ով:

Բանջարեղենի և մրգի ապրանքախմբերում 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ արձանագրվել է 11.6% և 0.8% գնանկում, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 12.4% և 5.8% գնաճ:

Բանջարեղենի և մրգի գների փոփոխությունները 2021-2023թթ. հունվարին[1]

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,%



2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի միջին կշռված գնաճը կազմել է 9.82%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 9.04% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 0.86 տոկոսային կետով:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գների մակարդակն աճել է 0.6%-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 0.3% գնանկում:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2024թ. հունվարին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2024թ. հունվարը		2024թ. հունվարը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հագուստ	0.2	-0.5	0.004	-0.011
Կոշիկ տարբեր տեսակի	5.2	-0.1	0.059	-0.001

[1] 2024թ. հունվարին 2023թ. հունվար և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների փոփոխությունների մասին տեղեկությունը բերված է հավելված 1-ում:

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2024թ. հունվարը		2024թ. հունվարը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Նյութեր բնակարանի նորոգման և սպասարկման համար	-1.1	0.0	-0.002	0.000
Կահույք և կահավորանք	4.7	-0.2	0.017	-0.001
Խոշոր կենցաղային սարքեր, էլեկտրական և ոչ էլեկտրական	3.5	-0.4	0.014	-0.002
Կենցաղային փոքր էլեկտրական սարքեր	4.0	0.2	0.003	0.000
Ապակե ամանեղեն, ճաշասպասք և տնային կահ-կարասի	3.4	-0.3	0.008	-0.001
Խոշոր գործիքներ և հարմարանքներ	-1.0	0.4	0.000	0.000
Ձեռքի գործիքներ և տարբեր հարմարանքներ	0.6	-0.1	0.000	0.000
Կարճատև օգտագործման կենցաղային ապրանքներ	-1.3	-0.5	-0.031	-0.010
Դեղագործական ապրանքներ	-4.8	-0.1	-0.149	-0.005
Բժշկական սարքավորումներ և սարքեր	-0.6	-0.4	-0.003	-0.002
Վառելանյութեր և քսանյութեր անձնական փոխադրամիջոցների համար	5.5	-0.5	0.289	-0.021
Սիրողական այգեգործություն	-2.5	11.7	-0.003	0.007
Ոսկերչական զարդեր	10.2	0.4	0.009	0.001
Անձնական գործածության այլ ապրանքներ	-0.2	-0.4	0.000	-0.001

Հանրապետության դիտարկվող 10 քաղաքներում 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.5-0.1%-ով, իսկ մեկում արձանագրվել է 0.2% գնաճ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.4%-ով:

2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ 2.6% և 2.3% գնանկում, իսկ 2023թ. հունվարի համեմատ՝ համապատասխանաբար 38.4% և 0.9% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2021-2024թթ.

2015թ. նկատմամբ



Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2024թ. հունվարին 2023թ. հունվարի համեմատ սակագներն աճել են 3.4 %-ով, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.0% -ով:

Որոշ ծառայությունների ենթախմբերի սակագների փոփոխությունները և ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա 2024թ. հունվարին

	Փոփոխությունը		Ազդեցությունը	
	2024թ. հունվարը		2024թ. հունվարը	
	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ. հունվարի նկատմամբ	2023թ. դեկտեմբերի նկատմամբ
	+/-, %		+/-, տոկոսային կետ	
Հագուստի մաքրում, նորոգում և վարձույթ	5.2	0.8	0.001	0.000
Կոշիկի նորոգում և վարձույթ	4.5	0.3	0.001	0.000
Բնակարանի նորոգման և սպասարկման ծառայություններ	2.4	0.0	0.001	0.000
Կահույքի, տնային գործածության առարկաների նորոգում	5.1	0.0	0.001	0.000
Կենցաղային սարքերի նորոգում	4.5	0.1	0.003	0.000
Բժշկական ծառայություններ	6.0	0.5	0.299	0.027
Մեքենայի կայանման համար վճարներ	243.8	243.8	0.167	0.171
Տրանսպորտի ծառայություններ	10.6	-0.9	0.233	-0.030
Հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	23.4	2.2	0.012	0.001
Սպասարկման ծառայություններ	3.2	0.2	0.054	0.003
Հյուրանոցային ծառայություններ	7.4	2.5	0.016	0.006
Վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայություններ	2.7	0.1	0.006	0.000
Տրանսպորտի ապահովագրություն	-7.9	6.4	-0.009	0.010
Ֆինանսական այլ ծառայություններ, չներառված ուրիշ խմբավորումներում	9.7	0.0	0.073	0.000

Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.7-2.3%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում բնակչությանը մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.9%-ով:

Արտարժույթի շուկա: 2024թ. հունվարին 2023թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գները և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել են 1.2% և 0.1%-ով (ԱՄՆ դոլարն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.4% և 0.3% հավելաճ: 2024թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 405.0 դրամ, ինչը 2.3%-ով գերազանցել է 2023թ. հունվարի համապատասխան ցուցանիշը (395.9 դրամ):

Հավելված 1

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների
տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2024թ. հունվարը	
	2023թ. դեկտեմբերի նկատմամբ	2023թ. հունվարի նկատմամբ
Խնձոր	7.6	-20.0
Տանձ	8.2	-12.5
Նուռ	11.7	-4.6
Խաղող	12.5	59.1
Ադամաթուզ (բանան)	14.4	11.0
Նարինջ	-0.9	-2.9
Մանդարին	-1.2	-14.3
Կիտրոն	-1.3	-5.2
Ելակ	15.8	4.0
Կաղամբ	29.3	89.2
Ծաղկակաղամբ	2.0	49.4
Խառը կանաչեղեն	31.3	-7.5
Լոլիկ	20.7	-5.2
Վարունգ	10.6	-25.8
Սմբուկ	24.0	32.2
Պղպեղ	17.7	1.3
Կանաչ լոբի	26.8	-14.9
Գազար	4.5	-13.2
Ճակնդեղ	1.5	-12.6
Գլուխ սոխ	11.0	-3.7
Սխտոր	4.1	-6.4
Սունկ	4.2	-9.3
Կարտոֆիլ	0.0	-40.3

Հավելված 2

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում

	2022թ. դեկ-տեմբերը 2021թ. դեկտեմ-բերի նկատմամբ	2023թ.												
		հուն-վարը	փետր-վարը	մարտը	ապ-րիլը	մա-յիսը	հու-նիսը	հու-լիսը	օգոս-տոսը	սեպ-տեմ-բերը	հոկ-տեմ-բերը	նոյեմ-բերը	դեկ-տեմ-բերը	դեկտեմ-բերը 2022թ. դեկտեմ-բերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ												
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	112.9	100.9	100.6	100.4	100.4	100.3	100.4	100.6	100.3	100.8	100.8	101.0	100.7	107.5
Հայաստան	108.3	101.4	100.1	99.3	100.1	98.2	98.6	99.0	100.1	100.9	100.3	100.5	100.9	99.4
Ռուսաստան	111.9	100.8	100.5	100.4	100.4	100.3	100.4	100.6	100.3	100.9	100.8	101.1	100.7	107.4
Բելառուս	112.8	100.8	101.3	100.6	100.4	99.7	100.3	100.3	99.7	100.7	100.6	100.7	100.9	105.8
Ղազախստան	120.3	101.1	101.3	100.9	100.9	100.6	100.5	100.6	100.7	100.6	100.7	101.0	100.8	109.8
Ղրղզստան	114.7	101.5	101.5	100.2	100.2	100.9	100.7	100.3	100.0	100.3	100.9	100.3	100.3	107.3
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) [1]	110.4	100.2	100.8	100.9	100.6	100.0	100.3	100.0	100.5	100.3	100.1	99.6	100.1	103.4
Ավստրիա	110.5	100.9	100.8	100.6	100.8	100.1	100.3	99.8	100.3	100.9	100.4	100.2	100.5	105.7
Բելգիա	110.2	98.3	100.3	100.2	98.7	100.2	99.9	99.4	102.5	99.6	100.3	99.9	101.1	100.5
Բուլղարիա	114.3	101.2	100.7	100.6	100.5	99.8	100.1	101.2	100.5	99.7	100.2	100.2	100.3	105.0
Հունգարիա	125.0	102.4	100.8	100.8	100.7	99.6	100.4	100.4	100.8	100.1	99.8	100.0	99.7	105.5
Գերմանիա	109.6	100.5	101.0	101.1	100.6	99.8	100.4	100.5	100.4	100.2	99.8	99.3	100.2	103.8
Հունաստան	107.6	99.5	100.2	101.6	101.1	100.5	100.9	99.0	99.8	101.9	100.1	98.9	100.1	103.7
Դանիա	109.6	100.5	100.8	99.8	100.3	98.5	100.3	102.1	99.2	99.7	100.3	99.6	99.5	100.4
Իռլանդիա	108.2	99.0	101.5	100.9	100.3	100.3	100.8	100.2	100.5	100.1	100.2	99.1	100.4	103.2
Իսպանիա	105.5	99.6	100.9	101.1	100.5	99.9	100.6	99.9	100.5	100.6	100.3	99.5	100.0	103.3
Իտալիա	112.3	98.5	100.1	100.8	100.8	100.3	100.1	98.4	100.2	101.7	100.1	99.4	100.2	100.5
Կիպրոս	107.6	98.6	100.8	101.3	100.9	100.4	100.3	101.4	101.1	100.2	99.9	98.5	98.8	101.9
Լատվիա	120.7	100.5	100.6	100.8	100.4	101.5	98.6	100.8	99.5	99.5	99.6	99.9	99.3	100.9
Լիտվա	120.0	100.6	100.7	100.7	100.2	99.9	99.9	99.8	99.9	100.7	100.3	99.6	99.4	101.6
Լյուքսեմբուրգ	106.2	99.7	101.4	100.2	100.7	99.8	100.4	99.7	101.9	100.4	99.9	99.4	99.6	103.2
Մալթա	107.3	99.6	100.9	101.4	103.1	101.6	101.5	100.3	100.4	99.3	98.6	97.1	99.8	103.7
Նիդերլանդներ	111.0	98.1	101.3	100.2	101.6	100.2	99.5	101.2	100.5	99.2	100.6	98.5	100.2	101.0
Լեհաստան	115.3	102.0	101.1	101.1	100.8	100.2	100.1	99.7	100.1	99.9	100.3	100.6	100.1	106.2
Պորտուգալիա	109.8	99.2	100.4	102.0	101.3	99.6	100.4	99.6	100.8	100.8	99.6	99.0	99.3	101.9
Ռումինիա	114.1	100.8	101.0	100.9	100.8	100.5	100.5	100.1	100.8	100.8	100.6	99.9	100.2	107.0
Սլովակիա	115.0	102.8	101.1	101.3	100.6	99.9	100.2	99.8	100.1	100.3	100.2	100.2	99.9	106.6
Սլովենիա	110.8	99.9	100.6	100.5	101.0	100.9	100.9	100.0	100.2	100.7	100.4	99.2	99.4	103.8
Ֆինլանդիա	108.8	100.5	100.7	100.4	100.1	100.1	99.8	100.3	98.9	100.6	100.2	99.5	100.2	101.3
Ֆրանսիա	106.7	100.4	101.1	101.0	100.7	99.9	100.2	100.0	101.1	99.4	100.2	99.8	100.1	104.1
Խորվաթիա	112.7	100.3	100.3	100.9	101.2	100.6	101.6	101.1	100.5	99.3	100.3	99.6	99.7	105.4
Չեխիա	116.8	106.6	100.8	100.3	99.9	100.3	100.3	100.4	100.2	99.2	100.0	100.0	99.6	107.6
Շվեդիա	110.8	98.2	101.0	100.5	100.2	100.1	101.0	99.8	99.8	100.4	100.1	100.2	100.7	101.9
Էստոնիա	117.5	100.6	100.7	100.7	101.9	100.0	100.8	99.5	100.5	99.9	99.5	100.0	100.0	104.3
Այլ երկրներ														
Կանադա	106.3	100.5	100.4	100.5	100.7	100.4	100.1	100.6	100.4	99.9	100.1	100.1	99.7	103.4
Նորվեգիա	106.3	99.9	100.4	100.9	101.2	100.5	100.7	100.3	99.0	99.8	101.1	100.7	100.1	104.7
Միացյալ Թագավորություն	110.5	99.4	101.2	100.8	101.2	100.7	100.2	99.5	100.3	100.5	100.0	99.8	100.4	103.9
ԱՄՆ	106.5	100.8	100.6	100.3	100.5	100.3	100.3	100.2	100.4	100.3	100.0	99.8	99.9	103.4
Թուրքիա	164.3	106.7	103.1	102.3	102.4	100.0	103.9	109.5	109.1	104.7	103.4	103.3	102.9	164.9
Ուկրաինա	126.6	100.8	100.7	101.5	100.2	100.5	100.8	99.4	98.6	100.5	100.8	100.5	100.7	105.1
Մոլդովա	130.2	100.5	100.9	100.8	102.2	100.5	99.5	99.2	99.9	100.5	100.5	100.2	99.6	104.2
Վրաստան	109.8	100.8	99.7	99.8	99.3	99.9	99.3	100.0	100.7	100.6	100.6	99.8	100.1	100.4
Շվեյցարիա	102.7	100.7	100.5	100.0	100.3	100.2	100.1	100.5	100.2	99.8	100.1	99.5	100.3	102.1
Ճապոնիա	104.0	100.5	99.4	100.4	100.6	100.1	100.1	100.5	100.3	100.3	100.9	99.8	99.9	102.6

[1] Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2024թ. փետրվարին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2024 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2024թ. մարտ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 166):

Հավելված 3

Հայաստանի Հանրապետությունում 2024թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի, տեսակարար կշիռների վերանայման և բազիսային ժամանակաշրջանի փոփոխության մասին

Համաձայն սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հաշվարկման մեթոդաբանության և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության տվյալները, կատարվել է սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ:

2024 թվականի հունվարից ՍԳԻ-ի համար ինդեքսների բազիսային ժամանակաշրջան է ընդունվել 2023 թվականի դեկտեմբեր ամիսը:

ՍԳԻ-ի հաշվարկման համար ապրանք-ծառայությունների զամբյուղի ընտրանքում ընդգրկվելու ստորին մակարդակ է սահմանվել տնային տնտեսությունների կողմից իրականացված ընդհանուր դրամական ծախսումների ծավալում 0.001 տոկոս տեսակարար կշիռը:

Հետազոտության արդյունքներով 2023 թվականի ՍԳԻ-ի հաշվարկման համար կիրառվող զամբյուղի համեմատ 2024 թվականին արձանագրվել են սպառման համամասնությունների որոշակի փոփոխություններ: Արդիականացվել է ապրանք-ծառայությունների և դրանց ներկայացուցիչների (տեսակների) անվանացանկը: 2024 թվականի հունվարից դիտարկվել է 426 ապրանք-ծառայություն՝ նախորդ տարվա 425-ի փոխարեն: Դիտարկվող ապրանք-ծառայություն-ներկայացուցիչների թիվը նույնպես ընդլայնվել է՝ կազմելով շուրջ 9600 (նախորդ տարվա 9500 ապրանք-ծառայություն-ներկայացուցիչների փոխարեն): Կանաչ սոխը ներառվել է խառը կանաչեղենի տեսականու կազմում, իսկ ծաղկակաղամբը և բրոկկոլին ընդգրկվել են սպառողական ապրանքների և ծառայությունների զամբյուղում: Միաժամանակ, ծառայությունների ոլորտի դրամական ծախսումների ծավալում ունենալով համապատասխան տեսակարար կշիռ, մատնահարդարման ծառայությունը ներառվել է ՍԳԻ-ի զամբյուղում:

ՀՀ ՍԳԻ-ի խոշորացված խմբերի տեսակարար կշիռների փոփոխությունները 2023-2024 թվականներին

%

	Ընդամենը	*այդ թվում՝*					
		Սպառման ապրանքներ	*դրանցից*				Ծառայություններ
			պարենային ապրանքներ (ներառյալ ալկոհոլային խմիչք և ծխախոտ)	*այդ թվում՝*		ոչ պարենային ապրանքներ	
				պարենային ապրանքներ	ալկոհոլային խմիչք և ծխախոտ		
2023	100.0	67.58	45.90	41.36	4.54	21.68	32.42
2024	100.0	66.40	45.22	40.91	4.31	21.14	33.64
Տարբերությունը (%-ին կետ)		-1.18	-0.68	-0.45	-0.23	-0.54	1.22

Հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին 2022 թվականի ցուցանիշները, իրականացվել է ՀՀ հետազոտվող 10 բնակավայրերի (մարզերի) և Երևան քաղաքի տեսակարար կշիռների վերահաշվարկ:

Սպառողական գների ինդեքսի 2024 թվականի տեսակարար կշիռներն ըստ դիտարկվող բնակավայրերի